ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ Ն.ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ- ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ- ՍՎԵՏԼԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ-ԱՂԱՎՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.1.ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ՁԵՎԵՐԸ 5

ԳԼՈՒԽ 2 2.1.ԻՄ ՎԱՐԱԾ ԴԱՍԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳ.....12

2.2.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրներից մեկն է օգնել սովորողներին ամբողջությամբ դրսևորելու իրենց կարողություններն ու ունակությունները, զարգացնելու նախաձեռնություն, ինքնուրույնություն, ստեղծագործական ներուժ:

Դպրոցականների ստեղծագործական հետաքրքրությունների և դրանց ձևավորման ու զարգացման պայմանների ուսումնասիրումը կարևոր է դպրոցական ուսուցման պրակտիկայի համար, քանի որ դպրոցական առարկայացանկի առավել կարևոր առարկաներից մեկն է: Այդ կարողությունները առավել մանրամասն ուսումնասիրել է Վ. Ա. Կրուտեցկու կողմից դեռ նախորդ դարի կեսին: Իր ուսումնասիրություններում նա ցույց է տվել, որ կարողությունների բաղադրիչները կրտսեր դպրոցական տարիքում դրսևորվում են նախնական, սկզբնական վիճակում:

Այդ իսկ պատճառով դրանց զարգացման հարցը ավելի սուր արտահայտվում է հենց այդ շրջանում: Ներկայումս, զարգացնող ուսուցման ամենատարբեր համակարգերի համատարած կիրառման ժամանակաշրջանում կարողությունների զարգացումը ապահովվում է հենց դպրոցական դասընթացի միջոցով: Բայց անհրաժեշտ է չանտեսել նաև արտաուսումնական միջոցները, որոնք խթանում են սովորողների ակտիվության ամրապնդմանն ու ընդլայմանը: Դրանցից մեկն էլ կենսաբանության արտադասարանական աշխատանքի իրականացումն է:

Կենսաբանությունից արտադասարանական աշխատանքը կենսաբանության ուսուցման գործընթացի, դպրոցականների գիտակցության և վարքի վրա ներազդելու բարդ գործընթացի, նրանց գիտելիքների և ունակությունների ընդլայման անբաժան մասն է: Այդ ունակությունները կախված են այնպիսի գործոններից, ինչպիսիք են կենսաբանություն առարկայի բովանդակությունը, ուսուցչի ամբողջ գործունեության բովանդակությունը՝ համակցված սովորողների բազմակողմանի գործունեության հետ ինչպես դասի ժամին, այնպես էլ դասից դուրս: Ցանկալի է այդպիսի աշխատանք սկսել իրականացնել հնարավորինս վաղ, այդ իսկ պատճառով

արտադասարանական աշխատանքին հատուկ ուշադրության է պետք դարձնել հանրակրթական դպրոցում:

Սրանով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունը: Վերոնշյալ խնդիրը թույլ է տալիս ձևակերպել **հետազոտության նպատակը.** տեսականորեն հիմնավորել և գործնականորեն ստուգել կենսաբանության արտադասարանական աշխատանքի տարբեր ձևերի կիրառման արդյունավետությունը և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը հանրակրթական դպրոցում:

Հետազոտության օբյեկտը. կենսաբանությունից արտադասարանական աշխատանքի կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության առարկան. Կենսաբանության դասագործընթացն է հանրակրթական դպրոցում:

Հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան կանխորոշել են մի շարք **փոխկապակցված խնդիրների առաջադրումը և լուծումը**.

1. Դիտարկել կենսաբանության արտադասարանական աշխատանք հասկացությունը և նրա ընդհանուր բնութագիրը:
2. Համակարգել արտադասարանական աշխատանքի տեսակները:
3. Պարզել կենսաբանության արտադասարանական աշխատանքի դերը դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման գործընթացում:
4. Գործնականորեն փորձարկել արտադասարանական աշխատանքի տարբեր ձևերի կազմակերպումը:

ԳԼՈՒԽ I

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.1. Արտադասարանական աշխատանքների կազմակերպման նպատակը և ձևերը

Արտադասարանական աշխատանքները կրտսեր դպրոցականների կրթության և դաստիարակության համակարգի բաղկացուցիչ մասն են: Դրանք կազմակերպվում են ուսուցման գործընթացից հետո՝ սովորողների ազատ ժամանակի հաշվին[4,էջ 18]:

Ուսումնական յուրաքանչյուր առարկայի գծով նախատեսված գիտելիքների պաշարը չի կարող սահմանափակվել միայն դասարանային աշխատանքով:

Արտադասարանային աշխատանքը դասարանում կատարված ուսումնական աշխա- տանքի օրգանական շարունակությունն է, լրացումը, միայն այն տարբերությամբ, որ արտադասարանային աշխատանքը կատարվում է ծրագրային նյութերից դուրս:

«Արտադասարանային աշխատանքը, իր նպատակներով ու խնդիրներով կապված է դասարանային աշխատանքի հետ, վերջինհաշվով նպաստում է ծրագրային նյութերի լավ յուրացմանն ու ամրապնդմանը, սակայն հաղորդած գիտելիքների ընդգրկման տեսակետից նրա ոլորտներից դուրս է գալիս, բոլորովին նոր տեղեկություններ է հաղորդում: Այս նոր տեղեկություններն ու փաստերը երեխան ստանում է արտադասարանային աշխատանքի միջոցով» [8,էջ 24-25]:Արտադասարանական աշխատանքների օրինակներ են լրացուցիչ պարապմունքները, էքսկուրսիաները, տարրաբնույթ թեմատիկ սեմինարները: Որոնք ունեն դաստիարակչական լայն հնարավորություններ, զարգացնում են աշակերտների աշխարհճանաչողությունը, հաղորդակման, համագործակցային կարողությունները, բարելավում են միջանձնային հարաբերությունները, յուրացվում են տարբեր միջավայրերում վարվելակելպի նորմերը[7, 219-220 էջ]:

Արտադասարանական աշխատանքի նպատակը սովորողների հետաքրքրությունների, պահանջմունքների բավարարումն է, որն իրականացվում է գործունեության տարբեր ձևերով, միջոցառումներով՝սովորողների

ցանկությամբ,կամավորության սկզբունքով /գրքի, ֆիլմի քննարկում, էքսկուրսիա, մրցույթներ, տոներ, բեմական հանդեսներ և այլն/ [5, էջ 17]:

Արտադասարանային աշխատանքը կենսաբանություն առարկայի ուսուցման կարևոր բաղադրամասերից մեկն է և առանց դրա հնարավոր չէ երբեք աշակերտների ձեռք բերած գիտելիքներն ու դրանց գործնական կիրառության մեջ նրանց վարժվածությունը կատարյալ համարել:

Կենսաբանության ուսուցման համակարգում արտադասարանային աշխատանքն իր ուրույն տեղը պիտի ունենա՝ որպես աշակերտների ինքնուրույնությունն ու ակտիվությունը զարգացնող, նրանց մեջ ստեղծագործական ունակություններ արմատավորող կարևորագույն միջոց:

Արտադասարանական միջոցառումը, ինչպես մատնանշում է Մ. Մանուկյանը, շատ առավելություն ունի դասի համեմատությամբ: Նրա բովանդակությունը խիստ կանոնարկված չլինելով՝թույլ է տալիս ավելի օպերատիվ կերպով օգտագործել սովորողների զարգացման համար գիտության, տեխնիկայի, մշակույթի և արվեստի նորագույն նվաճումները:Արտադասարանական աշխատանքը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, զեղարվեստական, տեխնիկական և այլ կազմակերպման համար, որիը նթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները [4, 35 էջ]:

Դպրոցականը սովորաբար ցանկանում է որևէ գործունեության մեջաչքի ընկնել, եթե վերջինս իր համար հետաքրքիր է, ուզում է ներկայացնել իր «ես»-ը: Սակայն ոչ միշտ է, որ կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու

ունակությունները, լինել համարձակ՝ հասարակության մեջ իրեն լիովին դրսևորելու համար:

Ինչպես նշում է անվանի մանկավարժ Սուխոմլինսկին.<<Չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսմամբ>>: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ յուր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով» [11, 116 էջ]:

Արտադասարանական միջոցառումները այն կարևոր ազդակներն են, որոնք նպաստում են աշակերտների ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը: Ուստի տվյալ առարկան դասավանդող մանկավարժի նպատակը պետք է լինի նաև արտադասարանական միջոցառումներին աշակերտներին նպատակամղել ստեղծագործական գործունեության: Վերջիններս պետք է նպաստեն աշակերտների ինքնադրսևորմանն ու ինքնաիրացմանը, սոցիումի որդեգրմանը, սոցիումին անդամագրմանը: Աշակերտների համար արտադասարանական միջոցառումները լինելու են ցանկալի և սպասված: «Դպրոցը ինչպես հարկն է հոգ չի տանում աշակերտների ապագա քաղաքացիական կերպարի ձևավորման մասին» [4, էջ 27],- գրում է Մ. Մանուկյանը:

Արտադասարանական աշխատանքի նպատակից բխում են առաջադրված հետևյալ խնդիրները.

- ձևավորել առարկայի, կենսաբանություն առարկայի գրականության նկատմամբ հետաքրքրության զարգացում,
- խորացնել դասարանում ձեռք բերված գիտելիքները, բարելավել այդ գիտելիքների որակն ու հմտությունները,
- զարգացնել դպրոցականի անկախ ճանաչողական գործունեությունը ազատ նախաձեռնության պայմաններում,
- զարգացնել ինքնակրթության կարողություն, դպրոցականների անհատականության մանկավարժական որակները հետաքրքրասիրությունը, աշխատասիրությունը, նախաձեռնողականությունը:

Սովորողների արտադասարանական աշխատանքը, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում է սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը:

Այսինքն՝ սովորողների արտադասարանական աշխատանքիչ հիմքում ընկած է գիտելիքների, ճանաչողական հտությունների ընդլայնումն ու զարգացումը: Այդ տեսանկյունից էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ՞ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Ճիշտ է նկատում Գ. Ի. Շչուկինան, որ ուսուցումը պետք է մշտապես լրացվի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը և դպրոցականների բազմակողմանի գործունեության կազմակերպմանն ուղղված արտադասարանական աշխատանքով [7, էջ 114]:

Ուրեմն սովորողների հարցասիրությունն առաջին հերթին իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև ժամանցայինհիրավիճակների, արտադասարանական աշխատանքների գործընթացում: Քանի որ սովորողների ժամանցի բազմապիսի տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը:

Արտադասաանական աշխատանքի նպատակն է ապահովել դպրոցականների բազմակողմանի գործունեությունը՝ զարգացնելով երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները [15, էջ 18]:

Մեծ է արտադասարանական միջոցառումների դերը, որոնք կարող են սեր և ձգտում առաջացնել դեպի ուսումնական գործընթացը: Աշակերտն այդ միջոցառումներից պետք է բավարարված և ինքնագոհ լինի, այն է՝ միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին, ապրումներին:

Միջոցառումները պետք է դառնան դպրոցականի բազմակողմանի զարգացման ու դաստիարակության միջոց, աշակերտը լինի միջոցառման առաջատարն ու պատասխանատուն:

Որպեսզի աշակերտն ապագայում իրեն զգա պետության քաղաքացի, դեռ դպրոցական տարիներից նրա մեջ պետք է ձևավորել ինքնուրույնություն և նախաձեռնելու կարողություն, որոնց կնպաստեն նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները: Իսկ վերջիններս կձևավորվեն արտադասարանական միջոցառումների ժամանակ:

Արտադասարանական աշխատանքի ձևերից են բազմաբնույթ միջոցառումները, որոնք զարգացնում են աշակերտների ինքնուրույնությունը, որոնց շնորհիվ կլուծվի նաև ինքնիրացման խնդիրը, իսկ ուսումնական գործընթացը աշակերտների համար կդառնա ավելի բովանդակալից ու հետաքրքիր:

Շատ կարևոր է, որ նաև արտադասարանական միջոցառումների կազմակերպումը, մասնավորապես Արտադասարանական ընթերցանությունն ու բազմաբովանդակ միջոցառումները:Աշակերտներին հանձնարարվող ստեղծագործությունները, գրքերը պետք է լինեն հետաքրքրական, որ կարողանան կլանել աշակերտին:

Ինքնուրույն կամ արտադասարանական ընթերցանությունը կարող է իրակա-նացվել բազմապիսի ձևերով (խմբակների, էքսկուրսիաների, գեղարվեստական երեկոների անցկացման ժամանակ և այլն): Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցչուհուն՝ ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության այնքան կարևոր գծի զարգացումը, ինչպիսին ճանաչողական հետաքրքրությունն է:

Ա. Տեր-Գրիգորյանը առանձնացնում է արտադասարանական միջոցառումների հետևյալ տեսակները՝

1.էքսկուրսաների, կինոնկարների, ներկայացումների դիտումներ, 2.երեխաների համար կազմակերպվող գեղարվեստական ընթերցումներ՝ ու-

սուցչի կամ լավ կարդացող երեխաների կողմից,

3. ինքնուրույն աշխատանք գրքի վրա,

4. ինքնուրույն աշխատանք մամուլի՝ թերթերի, ամսագրերի, նկարազարդ հանդեսների վրա,

5. երեխաների ուժերով կամ նրանց համար կազմակերպված երեկույթներ կամ ցերեկույթներ, գրական-երաժշտական հանդեսներ, հանդիպումներ նշանավոր անձանց հետ, հարց ու պատասխաններ, մրցույթներ և այլն[8, էջ 13]:

Ուսուցիչը ինքը պետք է ընտրի աշակերտների ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների անհատական առանձնահատկություններից: Դա նշանակում է, որ սովորողների ինքնուրույնությունը միայն աշակերտների անհատական աշխատանքների ընթացքում չի զարգանում:

Ինքնուրույն գործունեության բազմաթիվ կարողություններ, հատկապես սեփական ուժերը գնահատելու և սեփական գործի կարևորությունը գիտակցելու կարողությունները, պետք է զարգացնել խմբային աշխատանքների միջոցով: Սովորողների ներուժին համապատասխան ուսուցչի տրված առաջադրանքների կատարման արդյունքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Արտադասարանական աշխատանքի արդյունավետ պլանավորումն ուկազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել և ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը և նպատակասլաց կերպով զարգացնել դրանք: Արտադասարանական միջոցառումները նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու հմտությունների ձևավորելու, հանրակրթական կարողություններով ու հմտություններով զինելու համար:

Յուրաքանչյուր թեմատիկայի ուսումնասիրման գործընթացը ուղի է, հիմք նշված թեմայով միջոցառում կազմակերպելու համար, քանի որ.

ա/ աշակերտներին բազմաբնույթ տեղեկություններ է տալիս թեմատիկան ներառող տարբեր թեմաների մասին,

բ/ համալրում է նշված թեմայի շրջանակներում ձեռք բերած գիտելիքները,

գ/ ունենում է դաստիարակչական կարևոր արժեք:

Արտադասարանական միջոցառումներ պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել անցկացման հաճախականությունը, ինչպես նաև միջոցառումների որոշակի տեսակների նախապատրաստման մեթոդաբանությունը: Աշխատանքը պետք է պլանավորել այնպես, որ այն չստեղծի կրտսեր դպրոցականների գերծանրաբեռնվածություն և միևնույն ժամանակ ապահովի նրանց միատեսակ, կանոնավոր աշխատանքը ռուսաց լեզվի յուրացման ուղղությամբ ուսման ողջ ընթացքում:

Աշակերտների հետ արտադասարանական աշխատանք պլանավորելիս և կազմակերպելիս ուսուցիչը պետք է այն կառուցի խաղի հիման վրա: Խաղը մասնակիցներից պահանջում է լինել սրամիտ, ուշադիր, երեխաներին կրթում է հաստատակամություն և տոկունություն, նրանց մեջ զարգացնում արագ կողմնորոշվելու և ճիշտ լուծում գտնելու հմտությունը: Խաղեր ընտրելիս պետք է առաջնորդվել նրանով, որ նախ խաղային նյութը պետք է համապատասխանի դասի ծրագրին, երկրորդ՝ խաղերը լինեն զանգվածային:

Արտադպրոցական գործունեության դերը մեծացնում է կրթության սոցիալական գործառույթը, դրանք ներառում են երեխաներին կյանքի լայն հոսքերի մեջ, ծանոթացնում նրանց տարբեր գործունեությանը և ընդլայնում հաղորդակցության շրջանակը:

Այսպիսով՝ դպրոցի ուսումնադաստիարակչական համալիրում իրենց կարևորագույն տեղն են զբաղեցնում նաև արտադասարանական աշխատանքները, սովորողների ժամանցի կազմակերպումը խմբակներում, որոնք կարգավորում են դասից դուրս երեխայի ազատ ժամանակը:

Աշխատանքի այս ձևն ավելի կազմակերպված բնույթ է ստանում, առավել արդյունավետ է դառնում դպրոցներում: Դրանք նպաստում են ուսումնական առարկայի դաստիարակչական հնարավորությունների ավելի լրիվ օգտագործմանը, ուսուցչին լայն հնարավորություններ են ընձեռում ուսուցումն ավելի սերտորեն կապելու կյանքին, նպաստավոր պայմաններ են ստեղծում դպրոցականների իմացական հետաքրքրությունների զարգացման, նրանց մեջ գիտելիքներն ինքնուրույնաբար լրացնելու համար:

Աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության հարցերը, որոնք այսօր առաջատար խնդիր են համարվում ազգային դպրոցի վերակառուցման, կրթական համակարգի նոր բարեփոխումների շրջանում: Դա անհնարին է առանց սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման ու ստեղծագործական ունակությունների զարգացման:

Այսպիսով՝ սովորողների արտադասարանական աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը կախված է՝

ա)ուսուցչիմասնագիտական,մեթոդամանկավարժական պատրաստվածությունից ու լավատեսությունից,

բ) աշակերտների նկատմամբ նրա վստահելի վերաբերմունքից,

գ) դասարանի կոլեկտիվի գործունեության տարբեր ձևերի զուգակցումից ու կազմակերպումից,

դ) դպրոցականների աշխատանքի օբյեկտիվ խրախուսումից ու գնահատումից,

ե) նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալու մշտական պատրաստությունից և այլ հանգամանքներից:

Հենց այդ միտումով էլ մեր ուսումնասիրության կարևորագույն խնդիրներից մեկը արտադասարանական աշխատանքների, աշակերտների ժամանցի, ընդհանրապես դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ոլորտում նկատվող առաջավոր փորձի ընդհանրացումն ու տարածումն է՝ դրանով իսկ ապագա սկսնակ ուսուցիչներին որակապես նախապատրաստել մանկավարժական աշխատանքի:

ԳԼՈՒԽ 2

2.1.ԻՄ ՎԱՐԱԾ ԴԱՍԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՎԱԳ

. Հատուկ ուշադրություն եմ դարձրել դասարանական եւ արտադասարանական տարբեր տեսակի աշխատանքների կազմակերպման արդյունավետությանը (դասեր, էքսկուրսիաներ, խաղեր, վիկտորինաներ եւ այլն), որոնք անցկացվել են թե՛ ինքնուրույն, թե՛ ամառային էկոլոգիական արշավների ժամանակ: Բերեմ մեկ դրվագ. Այցելություն << Կարին գյուղ>> - ի տնկարան: Նպատակն է՝ ուսուցման մեթոդով սովորողների մոտ զարգացնել սովորել սովորելու կարողունակությունը և նպաստել ստեղծագործ մտածողության զարգացմանը, ինչպես նաև առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը: Նախապատրաստական փուլում մեզ շատ էր աջակցում <Հայաստան ծառատուն> ծրագիրը, որին մենք դիմել էինք խորհրդատվություն ստանալու նպատակով: Ծրագիրը հենց սկզբից ոգևորել է մեզ, որովհետև այն նախատեսում է ոչ միայն դասավանդումը արդյունավետ կազմակերպելու մեխանիզմների ուսուցում, այլև տրամադրում դասերի ուղեցույց: Մեզ ոգևորում էր հատկապես այն հանգամանքը, որ մեխանիկական հիշողության կարիք չկար: Մենք ինքնուրույն բացահայտման և հայտնագործությունների ճանապարհով կազմեցինք դասաշար և սկսեցինք մշակել ուսումնական նյութերը:

Շեշտադրվեց կրթության եռաստիճան իրականացում.

- Ինչ գիտելիքներ են ձեռք բերելու աշակերտները տվյալ թեմայի ընթացքում
- Ինչ կարողություններ ու հմտություններ է ձևավորվելու նրանց մոտ
- Ինչպիսի վերաբերմունք է ձևավորվելու շրջապատող բնության նկատմամբ

Կարևոր է, որ յուրաքանչյուր աշակերտ լինի ոչ միայն հասարակ դիտող, այլև դրսևորի առավել ինքնուրույնություն և ստեղծագործական ակտիվություն, ուշադիր հետևի էքսկուրսավարի պատմելուն և մասնագետի աշխատանքին: Այդ նպատակով օգտակար է նախապես աշակերտներին տալ հարցեր և առաջադրանքներ, որին նրանք պետք է մանրամասն պատասխանեն էքսկուրսիայից հետո: Նախագծային մեթոդը զարգացնում է սովորողի ինտելեկտը, պլանավորելու կարողությունը, նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը: Աշակերտը սովորում է վերլուծել,

կանխատեսել, աշխատել գաղափարի շուրջը: Ուսուցիչն էլ այս դեպքում պարզ գիտելիք փոխանցողից դառնում է տարբերակներ ու գաղափարներ մշակող, համակարգող, փորձագետ, խորհրդատու: Աշխատանքի ընթացքում աշակերտները ծանոթացան շրջակա միջավայրի, բնության զարմանահրաշ տարրերի հետ : Աշխատանքների կատարումը աշակերտների մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում, հոգատար վերաբերմունք բնության հանդեպ, հարգանք աշխատանքի հանդեպ: Ինչպես նաև միացնում է աշակերտներին կոլեկտիվներում, ովքեր կապված են իրար միասնական հետաքրքրություններով և ովքեր դաստիրակվում են ընկերասիրական ոգով: Աշակերտները մեծ տպավորություններով են վերադառնում տուն: Էքսկուրսիայի տպավորությունների մասին կազմվեց գրքույկներ, պատի թերթ:

Մեր տպավորությունները.

- Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես:

- Եկեք երկրում կատարվելիք փոփոխություններին զուգընթաց, մեկական ծառ ավելացնենք արդեն եղածին:

Կարևոր եմ համարում արտադասարանական աշխատանքի կենսաբանական էքսկուրսիաների անցկացման մեթոդիկան, սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Այն գործընթաց է, որը հնարավորություն է տալիս մարդուն ճանաչելու, հասկանալու, գնահատելու շրջապատի փոխհարաբերությունները: Շատ կարևոր է արտադասարանական պարապմունքների դաստիարակչական ուղղվածությունը:

2.2.Հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում

Հարցումը իրականացրել ենք հարցաթերթիկի միջոցով՝ googl form տարբերակով,: Հարցմանը մասնակցել են թվով 30 ուսուցիչ:

Ներկայացնում ենք հարցաթերթիկային հարցման արդյունքների վերլուծությունը:

1.Հաճա՞խ եք իրականացնում արտադասարանական աշխատանքներ երեխաների հետ:



Ուսուցիչների մեծամասնությունը՝ 70%-ը նշել է որ իրականացնում են և միայն 30%-ը՝ ոչ,սակայն բոլորն էլ ունեցել են մեծ դժվարություններ:

Հարց 2. Ո՞րառարկաներիշրջանակներում եք ավելի հաճախ իրականաց-նում:



Հարցմանը մասնակից ուսուցիչների մեծամասնությունը պատասխանել է, որ արտադասարանական աշխատանքներ են իրականացրել հիմնականում կենսաբանություն, բնագիտություն, ես և շրջակա աշխարհը առարկաներից, քիչ տոկոսը միայն՝3.3%-ը օտար լեզուներից:

3. Ինչպիսի՞ արտադասարանական աշխատանքներ եք կատարում:



Հարցմանը մասնակից ուսուցիչները հիմականում իրականացրել էին արտադասարանական միջոցառումներ, ուսուցողական էքսկուրսիաներ, այդ թվում, շրջայց թանգարաններում, ինչպես նաև իրականացրել են վիկտորինաներ տարբեր դասարաններում,սակայն մտահոգիչ է,որ դրանք շատ քիչ էին:

Ուսուցիչների մեծամասնությունը՝ 70%-ը նշել է որ իրականացնում են և միայն 30%-ը՝ ոչ:

Այսպիսով ամփոփելով հարցաթերթի արդյունքները մեկ անգամ ևս կարևորելով, որ արտադասարանային աշխատանքները մեծ դեր ունեն աշակերտների դաստիարակության և զարգացման գործում՝ պետք է ցավով նշենք, որ քիչ են եղել այդպիսի աշխատանքները:

Եզրակացություններ

Այսպիսով, մեր կատարած տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքները՝

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես: «Կենսաբանություն» առարկան միտված է կենսաբանությանը առնչվող հետաքրքիր և հարուստ ուսումնառության փորձառություն ապահովելու միջոցով սովորողների մոտ ձևավորել գիտական գրագիտություն և առողջ ապրելակերպ: Կենսաբանության մեջ սա արտահայտվում է աշակերտների մեջ բնության հանդեպ հոգատարության և սիրո ձևավորման, պահպանման, բնության անգնահատելի դերի գիտակցման ու արժևորման սերմանումով: Աշակերտները պետք է գիտակցեն, որ բնության մաքրությունը պահպանելով, նոր ծառեր տնկելով, մշակելով, յուրաքանչյուր կենդանի էակի կարևորությունը բնության մեջ գիտակցելով կերտում են սեփական տեսակն ու բնավորությունը, բարոյական գծերը, հասարակության համար պիտանի մարդ լինելը: Հետազոտության ժամանակ, դասի ընթացքում, առաջադրել եմ հետազոտական հարցադրումներ, մեթոդներ և վարկածներ: Աշակերտները վեր են լուծել հետազոտության արդյունքում ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարել են ընդհանրացումներ, կիրառել համալիր գիտելիքը և անհրաժեշտ հմտությունները: Ամփոփելով արդյունքները նշեմ, որ արտադասարանական աշխատանքները շատ առավելություններ ունի դասի համեմատությամբ: Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը ներառում է հզոր մետաճանաչողական բնութագրիչներ, ինչպիսիք են պլանավորումը, կառավարումը և մտորումները: Աշակերտները կառուցում են իրենց ճանաչողական կառույցները և հմտությունները խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով: Աշակերտների գործողությունները դիտարկվում են որպես աշակերտակենտրոն ակտիվ չափանիշ, անկախ այն բանից, թե ինչ է մտածում աշակերտը, երբ աշխատում է: Այսօր ազգային դպրոցի վերակառուցման շրջանում ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը և տարածումը մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է: Առաջավոր փորձի տակ հասկանում ենք ուսուցչի բարձր վարպետությունը, այնպիսի պրակտիկա, որը տալիս է

մանկավարժական բարձր արդյունք: Պետք է ընդունել, որ, վերջին տարիներին, դպրոցականների կենսաբանության գիտելիքների մակարդակը զգալիորեն նվազել է: Սովորողների մեջ քիչ չեն այնպիսիք, ովքեր չեն կարողանում լուծել ստանդարտ խնդիրներ: Նեգատիվ փոփոխությունների պատճառները, որոնք ի հայտ են եկել կենսաբանության ուսուցման վերջին տարիներին հայտնի են: Դա առաջին հերթին ուսումնական ծրագրի բարդացումն է, այն յուրացնելու ուսումնական ժամաքանակի կրճատումը, կենսաբանության լաբորատորիայի ոչ լիարժեք հագեցվածությունը : Դպրոցը լուրջ անելիքներ ունի լաբորատոր- գործնական աշխատանքների ուղղությամբ: Նյութերի և սարքավորումների անբավարար քանակի պատճառով լաբորատոր աշխատանքները կատարվում են միայն ցուցադրական սեղանի վրա, իսկ դա նշանակում է կրճատվում է աշակերտների ինքնուրույն աշխատանքների քանակը, հետևաբար ավելի քիչ ուշադրություն է դարձրվում աշակերտի կողմից նյութի յուրացմանն ու ամրապնդմանը: Աշակերտների հետաքրքրության պակասը կենսաբանության առարկայի նկատմամբ բացատրվում է նաև արտադասարանական աշխատանքների պակասով:

Դրա համար անհրաժեշտ է եղավ լուծել հետևյալ խնդիրների շարքը .

✓ Ուսումնասիրել մանկավարժական, հոգեբանական, մեթոդական գրականություն՝ կենսաբանության արտադասարանական աշխատանքների կազմակերպման և դրվածքի մասին:

✓ Մշակել արտադասարանական աշխատանքների կազմակերպման և անցկացման մեթոդիկա:

✓ Առաջարկված մշակումները ստուգել փորձի ճանապարհով: Ընդհանրացնելով առաջավոր ուսուցիչների փորձը, արտադասարանական պարապմունքները կարելի է պատկերացնել համակարգի տեսքով, որը կազմված է առանձին օրգաններից: Արտադասարանական աշխատանքում թեմատիկան շատ տարբեր է, կարևորը բովանդակությունն է, որը ենթարկվում է խիստ կոնկրետ պահանջների. • գիտականություն, • հասանելիություն, • ակտուալություն, • գործնական նշանակություն, •հետաքրքրաշարժություն:

Գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Խորհրդածությունն երդաստիարակության վրա, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1950 , 483 էջ,
2. Ասատրյան Լ.,.Հակոբյան Գ,.Ասատրյան Մ.Ա Մանկավարժություն,Երևան 2017, 358 էջ,
3. Մանուկյան Մ.,Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Երևան, 1980, 467 էջ,
4. Մարտիրոսյան Ն., Միջոցառումը որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության տեխնոլոգիա, Երևան, 2021, 127 էջ,
5. Մանուկյան Ս. Պ. , Ընդհանուրմանկավարժագիտություն, «Զանգակ-97», Ե., 2005, 511 էջ,
6. մեթոդական ցուցումներ ,
7. Շչուկինա Գ. Ի., Մանկավարժություն, Երևան, 1969, 758 էջ,
8. Տեր-Գրիգորյան Ա. , Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973, 250 էջ,
9. Տեր-Գրիգորյան Ա. , Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ,
10. Թորոսյան Կ.,. Չիբուխչյան Կ, Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում, «Նախաշավիղ», 2006, N6, 19 էջ,
11. Սուխոմլինսկի Վ. Ա., Դաստիարակության մասին, Ե., 1976, 230 էջ,
12. В. А. Сухомлинский В. А., Рождение гражданина, Москва, 1974,
13. Ушаков Н.Н., Суворова Г.И. Внеурочная работа по русскому языку, М.: 1985,
14. Макаренко А. С., Сочинения, в 7 том, т. 3, 1958,
15. Шамардина Т. Формируем учебно-познавательную компетентность учащихся // Директор школы, 2007, № 4, С. 57 – 58: